

Ինչպես ստեղծել UI OnlineSM հաշիվ



Հետևյալ տեղեկությունները Ձեզ կօգնեն ստեղծել UI OnlineSM հաշիվ և կտրամադրեն օգտակար տեղեկատվություն Ձեր հաշիվը գրանցելու, կառավարելու և պաշտպանելու մասին:

Ինչպես սկսել

UI OnlineSM հաշիվ ստեղծելու համար հարկավոր է նշել՝

- անունը և ազգանունը, ինչպես նշված է Ձեր գործազրկության ապահովագրության (UI) հայցում
- ծննդյան թվականը
- Էլփոստի հասցեն*
- սոցիալական ապահովության քարտի համարը
- EDD-ի Հաճախորդի հաշվեհամարը

* Եթե Էլեկտրոնային փոստի հաշիվ չունեք կամ ընդհանուր Էլփոստի հաշիվ եք օգտագործում մեկ այլ անձի հետ, անհրաժեշտ կլինի ստեղծել Ձեր սեփական Էլփոստի հասցեն, որպեսզի պաշտպանեք Ձեր անձնական կյանքի անձեռնմխելիությունն ու UI հայցի գաղտնիությունը:

Եթե Դուք նոր UI հաճախորդ եք, Ձեր *Employment Development Department (EDD) Customer Account Number*, (DE 5614), *Չբաղվածության զարգացման վարչության Հաճախորդի հաշվեհամարը*, տրամադրող նամակը փոստով ստանալու համար նկատի ունեցե՛ք 10 աշխատանքային օր: Այդ ծանուցման մեջ նշված է նաև Ձեր անունը, ինչպես հայցը ներկայացնելիս այն տրամադրվել է EDD-ին:

Եթե կորցրել եք կամ չեք կարողանում գտնել Ձեր EDD-ի Հաճախորդի հաշվեհամարը, օգնության համար դիմե՛ք EDD-ին՝ 1-800-300-5616 հեռախոսահամարով:

Բոլոր անհրաժեշտ տեղեկություններն ունենալուց հետո այցելե՛ք www.edd.ca.gov/UI_Online կայքէջը՝ գրանցվելու համար:

Ինչպես ստեղծել օգտանուն և գաղտնաբառ

Գրանցման գործընթացի ժամանակ կպահանջվի ստեղծել օգտանուն և գաղտնաբառ՝ հետևելով Էլրանի վրա տրված հրահանգներին: Ձեր հաշվի ավելի մեծ պաշտպանություն ապահովելու համար կպահանջվի ընտրել անհատական պատկեր և մակագիր: Վերջապես, գաղտնաբառի վերականգնման հարցում աջակցություն ստանալու համար կպահանջվի ընտրել չորս գաղտնի հարց և նշել յուրաքանչյուր հարցի պատասխանը:

www.edd.ca.gov/UI_Online

Ինչպես ստեղծել UI OnlineSM հաշիվ

SDI Online հաշիվ ունեցող հաճախորդներ

Եթե արդեն գրանցված եք SDI Online հաշվի համար՝ հաշմանդամության ապահովագրության (DI) կամ վճարովի ընտանեկան արձակուրդի հայց ներկայացնելու կամ չներկայացնելու հանգամանքից անկախ, ապա պետք է նույն օգտանունն ու գաղտնաբառն օգտագործեք UI OnlineSM ծառայությանը գրանցվելու համար: Գրանցվելիս ընտրեք «Գրանցվել SDI մուտքի տվյալներով» (“Register Using SDI Login”) կոճակը՝ UI OnlineSM-ում գրանցման գործընթացն արագացնելու համար:

Եթե չեք կարողանում գտնել կամ մոռացել եք Ձեր SDI Online օգտանունը կամ գաղտնաբառը, այցելեք SDI Online-ի ՅՏԳ էջը՝ http://www.edd.ca.gov/Disability/FAQ_State_Disability_Insurance_Online.htm, որպեսզի ամբողջական ցուցումներ ստանաք այդ տվյալը վերականգնելու մասին:

Ինչպես ավարտել գրանցման գործընթացը

Նոր UI OnlineSM հաշիվ ստեղծելուց հետո հինգ լրացրած ընթացքում էլեկտրոնային ծանուցում կուղարկվի գրանցման ժամանակ նշված էլեկտրոնային հասցեին: Դուք պետք է 48 ժամվա ընթացքում բացեք այդ էլեկտրոնային հաղորդագրությունը, ընտրեք եզակի հղումը և կատարեք բոլոր հրահանգները՝ գրանցման գործընթացն ավարտելու համար: Եթե 48 ժամվա ընթացքում չընտրեք եզակի հղումը, ապա պետք է ամենասկզբից կրկին սկսեք գրանցման գործընթացը:

Եթե չստանաք այդ կարևոր էլեկտրոնային հաղորդագրությունը, ստուգեք թափոնի կամ լցոնի պանակը: Որպեսզի EDD-ից ստացվող էլեկտրոնային նամակներն անայայման երևան Ձեր մուտքի արկղում, հասցեագրեք ավելացրեք noreply@edd.ca.gov:

Ինչպես կառավարել UI OnlineSM հաշիվը

- Ամբողջ ընթացքում ապահով պահեք Ձեր օգտանունն ու գաղտնաբառը:
- Ստուգեք EDD-ից ստացվող կարևոր ծանուցումների առկայությունը՝ կանոնավորապես մուտք գործելով Ձեր UI OnlineSM մուտքի արկղը:
- Նպաստներ ստանալու իրավունակությունը հաստատելու ժամանակ պահպանեք Ձեր հաստատման համարը:
- Համոզվեք, որ Ձեր կոնտակտային տվյալներն արդիական են, որպեսզի EDD-ն հայցի վերաբերյալ կարևոր տեղեկատվություն ուղարկի Ձեզ:

Պաշտպանեք Ձեր UI OnlineSM հաշվի անվտանգությունը

Գաղտնի տեղեկությունները, օրինակ՝ սոցիալական ապահովության քարտի համարը, EDD-ի Հաճախորդի հաշվեհամարը կամ UI OnlineSM օգտանունը և գաղտնաբառը, երբեք մի հայտնեք որևէ մեկին: Եթե կասկած ունեք, որ Ձեր UI OnlineSM հաշիվն արատավորվել է, իսկույն փոխեք գաղտնաբառը, անվտանգության պատկերը և անհատական մակագիրը: Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ օգնության համար դիմեք EDD-ին: Վերջապես, ընդհանուր հանրային համակարգից օգտվելիս հիշեք միշտ դուրս գալ UI OnlineSM համակարգից՝ Ձեր գաղտնի տեղեկություններն ավելի պաշտպանված պահելու համար:

Աջակցություն Ձեր UI OnlineSM հաշվին

Եթե UI OnlineSM համակարգն օգտագործելու ընթացքում աջակցության կարիք ունենաք, կարող եք օգտվել ներկառուցված օգնության հնարավորությունից, որպեսզի լրացնեք պարտադիր դաշտերը: Պարզապես ընտրեք ? պատկերակը կամ բացեք օգնության տեքստը՝ օգտվելով էլրանի վերին աջակողմյան անկյունում գտնվող հղումից: www.edd.ca.gov/UI_Online կայքէջում կան լրացուցիչ առցանց գործիքներ, ներառյալ ուսուցողական տեսաձեռնարկները և հաճախակի տրվող հարցերը:

Եթե Ձեր UI OnlineSM հաշվի հետ կապված տեխնիկական աջակցության կարիք ունեք, օրինակ՝ օգնություն գրանցվելու, գաղտնաբառերը նորից դնելու կամ կայքում կողմնորոշվելու հարցերում, կարող եք 1-800-300-5616 համարով դիմել EDD-ին: Ներկայացուցիչները հասանելի են խաղաղօվկիանոսյան ժամանակով ժամը 8:00-ից մինչև 12:00, երկուշաբթիից ուրբաթ, բացի պետական ոչ աշխատանքային օրերից:

Կարևոր տեղեկատվություն գնարկի համատեղելիության և ելնող պատուհանների արգելափակիչների մասին

UI OnlineSM համակարգը համատեղելի է Internet Explorer-ի, Google Chrome-ի և Mozilla Firefox-ի ամենավերջին տարբերակների հետ: Բացի այդ, պետք է կասեցնեք ելնող պատուհանների արգելափակիչների գործողությունը, որպեսզի կարողանաք օգտվել UI OnlineSM-ի գործառնական հնարավորություններից:

EDD-ն հավասար հնարավորություններ ընձեռող գործատու-ծրագիր է: Ըստ պահանջի՝ օժանդակ օգնություն և ծառայություններ են հասանելի հաշմանդամ անհատներին: